ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅԳԵԶԱՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Այգեզարդ համայնք Հեռ.(0235) 6 10 77

# Ո Ր Ո Շ Ու Մ

3 դեկտեմբերի 2012թվականի N 27

## ՔԱՂ. ՆԱԻՐԱ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ ՀԱՃԱԽՈՂ ԵՐԿՈՒ ԵՐԵԽԱՆԵՐԻՑ ՄԵԿԻ ՎԱՐՁԸ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով քաղ. Նաիրա Ստեփանյանի դիմումը և հաշվի առնելով , որ ապրում է սոցիալապես անապահով պայմաններում, հնարավորություն չունի արվեստի դպրոց հաճախող երկու երեխաների վարձավճարը մուծել .

Ավագանին որոշեց՝

Հարգել քաղ. Նաիրա Ստեփանյանի դիմումը զիջել նրա արվեստի դպրոց հաճախող երկու երեխաներից մեկի վարձավճարը:

| Կողմ (7) | Դեմ(0) | Ձեռնպահ(0) |
|---|---|---|

Սարգիս Մարգարյան
Գարիկ Բադալյան
Էդուարդ Մարգարյան
Ազատ Ավետիսյան
Վրեժ Դավթյան
Ռազմիկ Պետրոսյան
Յուրիկ Սարգսյան

Այգեզարդ համայնքի ղեկավար Ա.Մանուկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅԳԵԶԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Այգեզարդ համայնք Հեռ.(0235) 6 10 77

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

3 դեկտեմբերի 2012թվականի N 26

## ԱՅԳԵԶԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԱԻԴԱ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ ՀԱՃԱԽՈՂ ԴՍՏԵՐ ՎԱՐՁԸ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Այգեզարդ գյուղի բնակչուհի Աիդա Մարգարյանի դիմումը և հաշվի առնելով ,որ ապրում է սոցիալապես անապահով պայմաններում, հնարավորություն չունի արվեստի դպրոց հաճախող դստեր վարձավճարը մուծել .

Ավագանին որոշեց՝

Հարգել Աիդա Մարգարյանի դիմումը և զիջել նրա արվեստի դպրոց հաճախող դստեր վարձավճարը:

Կողմ (7) Դեմ(0) Ձեռնպահ(0)

Սարգիս Մարգարյան
Գարիկ Բաղալյան
Էդուարդ Մարգարյան
Ազատ Ավետիսյան
Վրեժ Դավթյան
Ռազմիկ Պետրոսյան
Յուրիկ Սարգսյան

Այգեզարդ համայնքի ղեկավար՝ Ա.Մանուկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅԳԵԶԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Այգեզարդ համայնք Հեռ.(0235) 6 10 77

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 դեկտեմբերի 2012թվականի N 25

## ԱՅԳԵԶԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՔՐԻՍՏԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ ՀԱՃԱԽՈՂ ԵՐԿՈՒ ԵՐԵԽԱՆԵՐԻՑ ՄԵԿԻ ՎԱՐՁԸ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Այգեզարդ գյուղի բնակչուհի Քրիստինե Հովհաննիսյանի դիմումը և հաշվի առնելով , որ ապրում է սոցիալապես անապահով պայմաններում, հնարավորություն չունի արվեստի դպրոց հաճախող երկու երեխաների վարձավճարը մուծել .

Ավագանին որոշեց՝

Հարգել Քրիստինե Հովհաննիսյանի դիմումը և զիջել նրա արվեստի դպրոց հաճախող երկու երեխաներից մեկի վարձավճարը:

Կողմ (7) Դեմ(0) Ձեռնպահ(0)

Սարգիս Մարգարյան
Գարիկ Բադալյան
Էդուարդ Մարգարյան
Ազատ Ավետիսյան
Վրեժ Դավթյան
Ռազմիկ Պետրոսյան
Յուրիկ Սարգսյան

Այգեզարդ համայնքի ղեկավար Ա.Մանուկյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅԳԵԶԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի

Այգեզարդ համայնք Հեռ.(0235) 6 10 77

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

3 դեկտեմբերի 2012թվականի N 24

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՓԱՍՏԱԲԱՆ ԿԱՐԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՂԱՐԿՎԱԾ N 86 ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԳՐՈՒԹՅԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

Քննարկելով ՀՀ փաստաբանների պալատի փաստաբան Կարինե Վարդանյանի 22.11.2012թվականի N 86 գրությունը՝ Այգեզարդ գյուղի բնակիչ Հոգապետ Սարգսյանի ընտանիքին 1991թվականին սեփականաշնորհված 0.55հա հողամասը վերագրանցելու Հոգապետ և Նորիկ Սարգսյանների անունով .
Քանի որ Հոգապետ Սարգսյանի ընտանիքը 1991թվականից առ այսօր վճարել է հողի բոլոր հարկերը .

Ավագանին որոշեց՝

Համաձայնություն տալ , որ 1991թվականին Հոգապետ Սարգսյանի ընտանիքին սեփականաշնորհված 0.55հա հողամասը (0281-002 ծածկագիր) , որի հիմքերը չեն պահպանվել , վերագրանցենլ նրանց անվամբ:

| Կողմ (7) | Դեմ(0) | Ձեռնպահ(0) |
|---|---|---|
| Սարգիս Մարգարյան<br>Գարիկ Բաղալյան<br>Էդուարդ Մարգարյան<br>Ազատ Ավետիսյան<br>Վրեժ Դավթյան<br>Ռազմիկ Պետրոսյան<br>Յուրիկ Սարգսյան | | |

Այգեզարդ համայնքի ղեկավար Ա.Մանուկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅԳԵՁԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Այգեզարդ համայնք Հեռ.(0235) 6 10 77

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

3 դեկտեմբերի 2012թվականի N 23

## ԱՅԳԵՁԱՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ և ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄՈՒՄ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ավագանու անդամ Գարիկ Բաղալյանը առաջարկեց համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի կազմում ընդգրկել երեք ավագանու անդամ:

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսգրքի13-րդ հոդվածի երկրորդ և ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 12.12.2008թվականի թիվ 6 հրամանով հաստատված «Համայնքային ծառայության մրցության և ատեստավորման հանձնաժողովների օրինակելի աշխատակարգերը հաստատելու մասին » կարգի 4-րդ կետի 2-րդ մասերով :

Ավագանին որոշեց՝

Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի կազմում ընդգրկել ավագանու անդամներ՝

1.Գարիկ Էդուարդի Բաղալյանին

2.Ռազմիկ Գրիշայի Պետրոսյանին

3.Յուրիկ Սուրենի Սարգսյանին

| Կողմ (7) | Դեմ(0) | Ձեռնպահ(0) |
|---|---|---|
| Սարգիս Մարգարյան<br>Գարիկ Բադալյան<br>Էդուարդ Մարգարյան<br>Ազատ Ավետիսյան<br>Վրեժ Դավթյան<br>Ռազմիկ Պետրոսյան<br>Յուրիկ Սարգսյան | | |

Այգեզարդ համայնքի ղեկավար Ա.Մանուկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅԳԵԶԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Այգեզարդ համայնք Հեռ.(0235) 6 10 77

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

3 դեկտեմբերի 2012թվականի N 22-Ն

## ԱՅԳԵԶԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2013ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 18,19-րդ կետերի և «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածների պահանջներով .

Ավագանին որոշեց՝

Այգեզարդ համայնքում 2013թվականին սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը՝

1.ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան համայնքի տարածքում նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլատվության համար տեղական տուրքը սահմանվում է.
հիմնական օբյեկտների համար
ա)մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար 10000 դրամ.
բ) սույն կետի ա) ենթակետով չնախատեսված բա)201-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 30.000դրամ.
բա)501-ից ինչև1000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 50.000 դրամ:
բբ)1001-ից ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 70.000դրամ:
Ոչ հիմնական շինությոնների տեղադրման համար
գ)մինչև 20քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 3000 դրամ.
դ)20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 5000 դրամ:

2.Համայնքի վարչական տարածքում շենքերին և շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման արդիականացման աշխատանքների (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար,եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով ՝ չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտների ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն 3000դրամ:

3.Համայնքի վարչական տարածքում շենքերի շինությունների , քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույտվության համար տեղական տուրք սահմանել 2000դրամ:

4.Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանել՝

ա) ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում ՝ յուրաքանչյուր եռամսյակի համար 2000դրամ

բ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում ՝ յուրաքանչյուր եռամսյակի համար 3000դրամ

5.Համայնքի տարաածքում

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ:

բ) հեղուկ վառելիքի , սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերումհեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գաղերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 50 000դրամ:

6.Համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար

1)Դատարկ գովազդային վահանակների համար յուրաքանչյուր ամիս -700դրամ

2) ալկոհոլային (սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս) արտադրանք գովազդող
արտաքին գովազդի համար յուրաքանչյուր ամիս՝ 1000 դրամ

3) Թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) , արտադրաք
գովազդող արտաքին գովազդի համար -3500դրամ

4) այլ արտաքին գովազդի համար յուրաքանչյուր ամիս՝ 1500դրամ

7. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմանները մշակելու և հաստատելու շինարարության ավարտը փաստագրելու համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար-1000դրամ:

8. Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերն հատկացնելու , հետ վերցնելու և վարձակալությամբ տրամադրելու դեպքում ՝ անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար Տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 1000դրամ:

9. Տեղական ինքնակառավարման մարմնի կողմից , մրցույթներ , աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար 2000դրամ:

10.Սույն որոշման 1-ին ,2-րդ և 3-րդ կետով սահմանված դրույքաչափերը համայնքում կիրառել 0.5 գործակիցով:

| Կողմ (7) | Դեմ(0) | Ձեռնպահ(0) |
|---|---|---|
| Սարգիս Մարգարյան<br>Գարիկ Բադալյան<br>Էդուարդ Մարգարյան<br>Ազատ Ավետիսյան<br>Վրեժ Դավթյան<br>Ռազմիկ Պետրոսյան<br>Յուրիկ Սարգսյան | | |

Այգեզարդ համայնքի ղեկավար Ա.Մանուկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅԳԵԶԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Այգեզարդ համայնք Հեռ.(0235) 6 10 77

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

3 դեկտեմբերի 2012թվականի N 21-Ն

## ԱՅԳԵԶԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ

Ղեկավարվելով « Տեղական Ինքնակառավարման մասին » օրենքի 16-րդ հոդվածի 1-ին կետով.

Ավագանին որոշեց `

Ընդունել Այգեզարդ համայնքի ավագանու կանոնակարգը ` համաձայն հավելվածի :

Կողմ (7) Դեմ(0) Ձեռնպահ(0)

Սարգիս Սարգարյան
Գարիկ Բաղալյան
Էդուարդ Սարգարյան
Ազատ Ավետիսյան
Վրեժ Դավթյան
Ռազմիկ Պետրոսյան
Յուրիկ Սարգսյան

Այգեզարդ համայնքի ղեկավար` Ա.Մանուկյան